

ներն ու քամին ուր որ ուզեն կը տանին։ Բրուսիոյ Կերտան լճին մէջ ալ այսպիսի կղզեակներ կան, և կ'ըսեն թէ ինչուան հարիւր ոչխարի չափ հոն կ'արծին։ () սնապրութեան քաղաքին մօտ ալ Վոլք լճին մէջ շարժական կղզի մը կայ՝ աղուոր ուռենիներով զարդարուած։

Ուրիշ շատ տեղուանք ալ այսպիսի շարժական կղզիներ կան, ինչպէս Սկովտիայի ու Ռուսիոյ մէջ, և ասոնցմէ ոմանք երբեմն կ'ընկղմին, երբեմն ջրին երեսը կ'ելեն։ ոմանք ալ ատեն ատեն երկու իրեք կտոր կը բաժնուին։ Ինդոնեզիայէս աս կղզիները աւելի հետաքրքրական բաներ են քան թէ օգտակար, ու երկրիս ամէն կողմերը կը գտնուին՝ ուր որ գետինը աւելի թաց, կամ ջուր կոխած է։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ե

Ո՛ր առաքինութիւնները պիտի պատուէր Դաստարաւը պղոց միտք, և ո՛ր ակտերէն աւելի պիտի զգուշացնէ շէնքերը։

Ա. Երաւարտութիւն . աս առաքինութիւնը ամենայն առաքինութեան հիմն է . ասիկայ տղոց միտքը տպաւորելու համար, եղբայրսիրութեան վերաբերեալ գործողութիւն մը ընել նուն պէս պէտք է զիրենք գովել ու վարձատրել . ընդհակառակն՝ թէ որ եղբայրսիրութեան դէմ բան մը ընեն, պէտք է պատժել։ Երբոր բանականութիւննին աւելի բացուի, յիշեցնելու է իրենց Վրիստոսի պատուէրքը . « Սիրեսցես զնկեր քո իբրեւ զանձն քո », և աս պատուիրանին ուժովը պէտք է ուրիշներուն ըսածը աղէկ մեկնել, իրենց ալ այնպէս ընել տալ . պէտք է ստէպ խօսիլ աս պատուիրանին հարկաւորութեան վրայ . վասն զի թէ որ ամէն մարդ ասիկայ

աղէկ պահելու ըլլար, երջանիկ կ'ըլլար։

Բ. Երաւարտութիւն . տղոց միտքը տպաւորելու է՝ թէ ան բանն որ ուզակի իրենցը չէ, իրենց չսեպհականեն, ոչ բռնութեամբ և ոչ զուրիշները խաբելով։ Եւ առաքինութիւնը մարդուս բնական է . բայց տղոց սրտին մէջ արմատացնելու համար երկու զգուշութիւն պէտք է ընել . մէյմը՝ տղոց առջեւ անիրաւութեան օրինակ չտալ . երկրորդ՝ ամէն ակտերէ զգուշացնել զիրենք, ու կրքերնին սանձել։

Գ. Երաւարտութիւն . այսինքն ուրիշի ըրած բարիքը ճանչնալ ու սիրել անիկայ։ Տղոց աղէկ իմացնելու է, որ իրենց ընդունած բարիքներուն մէջ ամենէն մեծն է քրիստոնէական դաստիարակութիւնն ու իրենց սորված գիտութիւնը . ուստի բոլոր իրենց վրայ աշխատողներուն երախտագէտ պիտի ըլլան։

Դ. Երաւարտութիւն . աս զգացմունքը տղոց խիստ բնական է . և զիրենք աս առաքինութեան մէջ հաստատելու համար՝ բաւական է զիրենք վարձատրելը ամէն անգամուն որ ճշմարտութիւնը կը զուրցեն, և թէ որ յամառութիւն սուտ զուրցեն՝ պատժել . բայց թէ որ իրենց յանցանքը խոստովանին՝ ան ատեն թողութիւն տալը վարձքի տեղ կը սեպուի։ Եւ ալ գիտնալու բան է որ եթէ տղայ մը՝ զիւրաւ թողութիւն կ'առնեմ ըսելով նոյն յանցանքը սովորական բան մը դարձնէ, ան ատեն պատժելու է։ Իսկ աս ալ պէտք է նայիլ որ ճշմարտասիրութեան հոգով ամէն բան չզուրցէ տղան . ապա թէ ոչ, բամբասանաց կ'երթայ ծայրը ու գէշ գէշ հետեւանքներ կ'ունենայ։

Ե. Երաւարտութիւն . բարեսրտութիւնը ըսելով պէտք չէ միամտութիւն հասկընալ . հապա ասով մարդ ամենուն վրայ վստահութիւն մը կ'ունենայ, որով տուած խօսքին վրայ ալ հաստատ կը կենայ։ Երաւարտութեան առաջին

օրինակը գաստիարակը պիտի տայ իր աշկերտներուն, որով տղաք ալ աս առաքինութեան վրայ սէր կը կապեն:

Զ. Վերել անխառնութեանց. վրէժ-խնդրութեան սգին՝ տեսակ տեսակ անիրաւութեանց ու չարագործութեանց պատճառ կ'ըլլայ. ուստի յայտնի բան է թէ որչափ հարկաւոր բան է տղոց պղտիկուց սորվեցընել թշնամեաց ներելու սքանչելի առաքինութիւնը: Եւ առաքինութիւնս ալ տղոց սիրտը տպաւորելու համար, երբ որ իրենց դէմ եղած անիրաւութեան մը կը ներեն՝ պէտք է վարձատրել զիրենք, ու երբ որ վրէժխնդրութիւն կ'ընեն՝ պատժել: Եւ մէն անգամ որ տղոց մէջ կուի մը ծագի, վարժապետը պիտի հաշտեցընէ զիրենք, և պէտք է որ նախատողը նախատուողէն թողութիւն առնէ. վասն զի աս բանս թշնամւոյն թողութիւն տալու առջին շնանն է: Եւ ատ օգտակար է տղոց յիշեցընելը նաեւ Վերիստոսի ան երկու պատուիրանները որ կ'ըսէ. «Եւ ես», «ասեմ ձեզ. սիրեցէք զթշնամիս ձեր», «որ հնեցէք զանիծիչս ձեր, բարի աւրարէք ատելեաց ձերոց, և աղօթս արարէք՝ ի վերայ անոցիկ որ լլկենն զձեզ և հալածեն. զի եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինս է. զի զարեւ. գակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց»:

Է. Չափաւորութեան. այսինքն մեր կիրքերուն վրայ տիրել, ու երբ որ չափէ դուրս ելեն՝ սանձել ու զսպել: Չափաւորութեան առաքինութիւնը տղոց միտքը տպաւորելու համար՝ պէտք է նախ ծնողք և գաստիարակները բարի օրինակ տան. տղոց առջև ամենևին յանկարծական կիրքեր չցուցընեն, և ինչպէս որ ուրիշ առաքինութիւններուն համար ըսինք՝ պատժել կամ վարձատրել. իսկ երբ որ կիրքերնին անցնի զիրենք խրատել, ու աս ախտին գէշութիւնները ցուցընել, թէ ինչպէս մարդս բարկութեամբ գազան մը կը դառնայ: Բայց աս բանս

դիտելու է միշտ. քանի որ տղան կիրքի մէջ է՝ ոչ երբէք պատիժ տալու է. վասն զի տղան բարկութեան մէջ եղած ատենը չկրնար իր յանցանքը ճանչնալ ու խոստովանիլ, ոչ իր կրիցը յաղթել, և ոչ գաստիարակին խրատներուն աղէկութիւնը ըմբռնել:

Ը. Համեմատութեան. տղաքը համեմատութեան մէջ մեծցընելու առաջին հնարքն է՝ առջևնին ան տեսակ բաներու վրայ չխօսիլ, որ տղոց անհամեմատութեւնը պատճառ կրնան ըլլալ:

Թ. Դասակարգութեան. որ է զգուշութիւն ընել ուտելու բաներու մէջ. ասով մարդ թէ հոգեւոր և թէ մարմնաւոր խիստ շատ տեսակ ախտերէ ազատ կը մնայ: Տղոց սորվեցընելու է որ հարկաւորը ունենալէն ետեւ՝ անով փոշ ըլլան, ու տեսակ տեսակ կերակուրներ չուզեն, կամ նոյն բանէն խիստ շատ չուտեն:

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՒՏԻՑ

Ա.

Վերիստոսի Ռոմանիէն առջի չորս դարերը:

ԳԻՒՏԻՑ պատմութիւն ըսելով կ'իմանանք նաեւ վաճառականութեան ու ճարտարութեան զարգացումը:

Հնարք մը, գիւտ մը, նոր ճարտարութիւն մը շատ անգամ տէրութեան մը բոլոր վիճակը կը փոխէ. տունի մը կամ որդի մը մէկ տեղէն մէկալ տեղ երթալը, ինչպէս է խաղողը, կամ մետաքսի որդը, և կամ մէկ պարզ երկրագործական գիւտ մը, բաւական է ամբողջ ազգի մը վիճակը փոխելու:

Եւ քանի որ գարեբուս գրականութեան, ուսմանց և արհեստներուն ծաղկիլը պատմութենէն առաջ լաւ կ'ըլլայ որ հռոմայեցւոց տէրութեան ժամանակը եղած բոլոր Եւրոպայի վիճակը համառօտ կերպով մը զուրկենք: